ԻՆՖՈՐՄԱՑԻԱՅԻ ԱԶԱՏՈՒԹՅԱՆ ԿԵՆՏՐՈՆ ՀԿ
ՀՀ, ք. Երևան, Բուզանդի 1/3, 4-րդ հարկ
Հեռ. 56 03 60, Էլ. հասցե foi@foi.am, www.foi.am
FREEDOM OF INFORMATION CENTER NGO
1/3 Buzand street, 4th floor, Yerevan, RA

09.09.2015թ.
260-ի 5

Երեւանի քաղաքապետ
պարոն Տարոն Մարգարյանին

Տեղեկատվություն ստանալու հարցում

Հարգելի պարոն Մարգարյան,

Ղեկավարվելով ՀՀ Սահմանադրության 27 և 27.1 հոդվածների և “Տեղեկատվության ազատության մասին” ՀՀ օրենքի 6-րդ հոդվածի դրույթներով՝ խնդրում ենք տրամադրել հետեւյալ տեղեկությունները.

1. Ո՞ր կազմակերպությունն է սպասարկում 38 համարի ավտոբուսի երթուղին,
2. Խնդրում ենք տրամադրել համապատասխան պայմանագրի եւ/կամ տվյալ կազմակերպության իրավազորությունները եւ պարտականությունները սահմանող այլ փաստաթղթերի (որոշում, համաձայնություն, մրցույթի արդյունքներ եւ այլն) պատճենները,
3. Քանի՞ ավտոբուս է սպասարկում 38 համարի երթուղին,
4. Օրվա ո՞ր ժամերին պետք է իրականացվի երթուղու սպասարկումը (ո՞ր ժամին է առավոտյան առաջին ավտոբուսի մուտքը երթուղի եւ ո՞ր ժամին է երեկոյան վերջին ավտոբուսի մուտքը երթուղի),
5. Ի՞նչ պարբերականությամբ պետք է ավտոբուսները մուտք գործեն երթուղի:

“Տեղեկատվության ազատության մասին” ՀՀ օրենքի 9-րդ հոդվածի համաձայն՝ տեղեկություն ստանալու գրավոր հարցմանը պատասխան տրվում է այն ստանալուց հետո 5-օրյա ժամկետում: Ուստի, խնդրում ենք տեղեկություն ստանալու հարցումին պատասխանել օրենքով սահմանված ժամկետներում:

Կանխավ շնորհակալ եմ:

ԻԱԿ իրավաբան Գեւորգ Հայրապետյան